Մեր նպատակը ոչ բժշկին գործունէութիւնը և ոչ հիւանդաց բազմութիւնը յայտնել է, այլ մինչ ցարդ Ս. Քաղաքիս մէջ որ իւր անուամբը ու յատկութեամբը և անօրինակ տեղեաց եղականութեամբը բոլոր աշխարհիս մէջ առաջինն է, մինչ ցարդ կ'ընեմք հասարակութեան համար հիւանդանոց մի չունենալն է որ կը յիշեմք: Թէ և անուրանալի է Ռուսաց և Գաղղիացւոց հիւանդանոցներուն անխտիր հիւանդ. ընդունելնին. բայց որովհետև չափաւորեալ թիւ մի որոշուած է իբրև կանոն, անկէց աւելի չընդունուիր. ուստի շատ ժամանակ եղած է, որ աղքատ հիւանդք անխնամ մնացած են:

Բարեխնամ կառավարութեան հոգը՝ որ միշտ աղքատաց հանգստութիւն և անդորրութիւն ունենալնին է, անցեալ տարի Պետութ. գումարուած քաղաքական ընդհանուր ժողովին մէջ, զորը ժամանակին յիշած եմք, Ս. Քաղաքիս մէջ կառավարութեան կողմանէ հասարակաց հիւանդանոցի մի շինուիլը առաջարկուած և տեղեկագիրը Նախարարի կուսակալին խրկած էր: Ամսոյս մէջ հրամանն ընդունեց կառավարութեան դրամովը հասարակաց հիւանդանոց մի շինել յաջողութիւն և 'ի մխիթարութիւն աղքատ և անտէր հիւանդաց:

— Ամսոյս 10ին Նուգոլիայէն եկաւ Մկրտիչեան Կարապետ անուն տղան ժառանգաւորաց ուսումնարանի աշակերտացս, և ըստ կանոնի բժշկէն քննուելով 'ի շարս աշակերտաց ընդունուեցաւ:

Բժշկի Վկայագրոյն օրինակը:

Ամենապատիւ Սրբազան Հայր.

Նուգոլիացի Կարապետ Մկրտիչեան տղան ըստ բժշկական օրինաց քննեցի որ կազմութեամբ և ներքին զգայարանօք առողջ ըլլալուն կը վկայեմ:

Նուաստ Սահակ փիթաղճեան.
բժիշկ Ս. Աթոռոյս
Երուսաղէմի.

1863 Ապրիլ 23
Երուսաղէմ.

—Սուրբ Աթոռոյս տպարանէն 'ի լոյս ընծայուած գրքերը առ այժմ հետեւեալ տեղերը կը վաճառուին Ֆռանկի հաշուով անփոփոխ:

Բերիոս (Հալէպ) Արժ. Տ. Խաչատուր Քահանային գրատնեակը:

Դամասկոս սուրբ Սարգիս Եկեղեցին:

Գահիրէ Զմիւռնացի Լազարով մեծապատիւ Աղա Սիմէօնի վաճառատունը:

Զմիւռնիա Մնծ. Տէտէեան եղբարց գրատունը:

Կիպրոս Արժ. Տէր Գասպար քահանայի ձեռամբ:

Խարբերդ Մնծ. Աստուածատուր աղա Ֆէրմանեանի վաճառատունը:

Կ. Պօլիս. Մնծ. Սարգսեան և այլ գրավաճառաց քով:

Տիգրանակերտ Նախաշեան Մնծ. Յովհաննէս աղայի վաճառատունը:

Հանդիսիս բաժանորդ գրուիլ փափաքողները կրնան վերոյգրեալ անձանց միջոցաւ՝ և կամ ուղղակի Սուրբ Երուսաղէմ գրելով իրենց փափաքը լեցնել:

ՄԱՄԼՈՅ ՑԱՆՑՆՈՒԱԾ.

Սաղմոս խաչերագիր 18 թուղթ.
Տօնացոյց միջակ.
Գործք առաքելոց.